600.0181.22.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2016 թվականի №181Ա
քաղ. Երևան

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑ III» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության, «Մայնի Ֆրանկֆուրտի Կրեդիտանշտալտ Ֆյուր Վիդերաուֆբաու» կազմակերպության (այսուհետ՝ KfW) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված վարկային և ծրագրային համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016 թվականի մայիսի 27-ին կնքված ենթավարկային պայմանագիրը, որոնց շրջանակներում ներգրավված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» ծրագրի իրականացմանն ուղղված մինչև 83 000 000 (ութսուներեք միլիոն) եվրո գումարի չափով ներդրումները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկային միջոցների հաշվին իրականացվող ներդրումներ, և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» ծրագրի իրականացմանն ուղղված ներդրումային ծրագրի շրջանակում ներգրավված միջոցների՝ KfW-ի կողմից 83 000 000 (ութսուներեք միլիոն) եվրո գումարի չափով տրամադրված վարկի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Ընկերությանը հնարավոր համաֆինանսավորվող

գումարների վերադարձը կապահովվի էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկում դրանց սպասարկման և մարման ծախսերը ներառելու միջոցով՝ ըստ ենթավարկային պայմանագրում ամրագրված պայմանների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 հունիսի 2016թ.
ժամը 16^{00}